

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Կեդրոնական վարչական ժողով

Ամենապատիւ Տ. Եղիշէ Աբբ. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Մօտ է Քրիստոսի Ծննդեան սուրբ տօնը և Բեթղեհէմի յոյ՝
սը առաջին առիթով պիտի յուսաւորէ Սուրբ Տեղեաց Աստուածա-
կոյս վայրերը, ի շարս որոնց նաեւ Հայոց Պատրիարքական Աթո-
ղը, որուն գահակալն էք այսօր Դուք: Թոյլ տուէ՛ք այս առիթով
շնորհաւորել Ձեր Ամանորը, Ս. Ծնունդը եւ Աստուածայայտու-
թիւնը, անձնապէս եւ յանուն Հ. Բ. Ը. Միութեան աշխարհացրի
անդամներուն ու մարմիններուն:

Երուսաղէմի Պատրիարքական Աթողը սահմանուած է ազ-
գային ու եկեղեցական պատմական դերի մը եւ կը յուսանք որ խա-
ղաղութեան պայմաններուն տակ եւ Ձեր իմաստուն առաջնորդու-
թեամբ այդ առաքելութիւնը կը պսակուի պողաբեր արդիւնքնե-
րով:

Նոր Տարուան սեմին կանգնած մեր սրտագին մաղթանքն է
որ Քրիստոսի Ծննդեան այդ սրբազան վայրերը վայելեն օրհնաբեր
խաղաղութիւն մը, որպէսզի Հայոց Պատրիարքարանն ու վանքը
եւս կարողանան իրագործել շինարար եւ ստեղծարար կեանք մը:

Ձեզի անձամբ, Ս. Աթոռիդ միաբանութեան ու ժողովուր-
դին կը մաղթենք երջանիկ ու խաղաղ տարի մը:

Լաւագոյն զգացումներով՝

Ա. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն

Նախագահ

Նիւ Եորք

Դեկտեմբեր 17, 1972

